



ԱՎՏՈՍՈՒՐԻՆԵՐԸ ԱՂՏՈՏՈՒՄ ԵՆ ՄԹՆՈՒՈՐՏԸ

Յուրաքանչյուր փոխադրամիջոց էներգիայի որևէ տեսակ փոխարկամ է մեխանիկականի: Օրինակ՝ ավտոմոբիլում վառելիքի այրումից ստացված էներգիան փոխարկվում է մեքենայի շարժման կինետիկ էներգիայի, և տեղի է ունենում էներգիայի անխուսափելի կորուստ շրջակա միջավայրում: Բոլոր տեսակի փոխադրամիջոցներում էներգիայի կորուստները մոտ 60 - 70 % են:

Ավտոտրանսպորտը մթնոլորտային օդի գլխավոր աղտոտողներից է:

Ավտոմոբիլները մեկ տարում մթնոլորտ են արտանետում ավելի քան 40 միլիոն տոննա վնասակար նյութեր: Ավտոմոբիլը մի կողմից թեթևացնում է մարդու կյանքը, իսկ մյուս կողմից՝ թունավորում նրան: Միայն մեկ մարդատար ավտոմոբիլը մթնոլորտից տարեկան կլանում է միջին հաշվով 4 տոննա թթվածին՝ աշխատած գազերի հետ դուրս նետելով 800 կգ ածխածնի օքսիդ, 40 կգ ազոտի օքսիդ և 200 կգ տարբեր ածխաջրածիներ:

Ներքին այրման շարժիչների արտանետած գազերում հայտնաբերվել է կյանքի համար վտանգավոր ավելի քան 200 նյութ:

Մթնոլորտի մեջ վնասակար արտանետումները փոքրացնելու նպատակով մասնագետները քննարկում են տարբեր հնարավորություններ.

1. ավտոմոբիլների անցում դիզելային շարժիչների,
2. բենզինի փոխարեն գազի (մասնավորապես՝ ջրածնի) օգտագործում, որը լրիվ է այրվում,
3. էլեկտրամոբիլների օգտագործում, որոնք օժտված են հատուկ լիցքավորման սարքերով,
4. ավտոմոբիլների տանիքներին արեգակնային մարտկոցների տեղադրում՝ արեգակնային էներգիան օգտագործելու համար,
5. մագնիսական և օդային կախովի գնացքներում էլեկտրաշարժիչների կիրառություն:

Մարդկության խնդիրը բնակության առողջ միջավայր ստեղծելն է: Դրա համար անհրաժեշտ է խելամտորեն օգտագործել էներգիայի բոլոր տեսակները: